

ՄԵԿԵ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мешакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցւումով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրութիւնը առաւօտեան 10 կոպեկով.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿՈՅՍ ՀՈՒՓՍԻՄԻ ԱԼԷԿՍԱՆԴՐԵԱՆ ԹԱՅԻՐԵԱՆ

Խորին չնորակաւորութիւն է յայտնում բոլոր այն հոգեւորական և աշխարհական անձնաւորին, որոնք իրանց ներկայութեամբ պատեցին իր եղբայր

ԻՎԱՆ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻՉ ԹԱՅԻՐԵԱՆԻ

յիշատակը:

1—1

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թորած նախաձեռնութիւն.— Երբեքին Տե-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ ժելեզնիօվադից. Նամակ
Անխարազից. Երբեքին լուսեր.— ԱՐՏԱՔԻՆ Տե-
ՍՈՒԹԻՒՆ. Այրաւանցիների համաժողովը. Այ-
տաքին լուսեր.— ԷՆԻՍԻՍԻՐԵՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՆ
ԲՈՒԹԻՒՆԵՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱՅԻՆ. Աղբիւր սեռի
վաճառքը Եւրոպայում:

ԹՄՐԱԾ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆ

«Մշակի» երկնկայ համարում մենք խո-
սեցինք այն անյարմարութիւնների մա-
սին, որոնց հանդիպում է ձանապարհորդը
մեր երկրում: Մեր հիմնական թէ յիշած ան-
յարմարութիւնների և թէ ուրիշ պակա-
տութիւնների մեր երկրի անկարող է
այն դերը կատարել, որ նրան վերապահ-
ված է, իբրեւ մի երկրի, ուր բնութիւնը
հանդէս է եկել իր բոլոր ոյժով և հա-
րստութեամբ:

Վերցնենք մեր երկրի իբրեւ բժշկական
նշանակութիւն ունեցող մի տեղ, իբրեւ թէ
ընդարձակ և բազմաոտնակ յատկութիւն-
ներով մի տարածութիւն, որտեղ կան
բնական պայմաններ՝ մարդկանց բուժե-
լու զանազան տկարութիւններից:

Բժշկական գիտութիւնը ամեն օր ա-
ռաջագիտութիւններ է անում և նորանոր
գիտելիքներ է անում: Նա կարողացել է բա-
նալ շատ գարշտիկներ մարդկային հիւան-
դութիւնների վերաբերութեամբ և ունի
անթիւ փորձեր այս կամ այն դեղի գոր-
ծածութեան մասին: Սակայն նոյն բժշ-
կական գիտութիւնը ամեն օր աւելի ու
աւելի համոզվում է և աշխատում է հա-
մադրել բոլորին, որ ամենալաւ բուժիչ գոր-

ծոնները բնութեան գործոններն են՝ օդը,
լույսը, ջուրը, բուսականութիւնը, տա-
քութիւնը, և մարդկային կազմուածքի
գործունէութեան կանոնաւորումը: Իսկ
կովկասը առատ կերպով կարող էր ունե-
նալ ամեն տեսակ բուժարաններ և սանա-
տորիաներ, որոնք մատակարարէին մարդ-
օր, տային լոյս, տաքութիւն, ջուր, բու-
սականութիւն:

Յայտնի է, որ այն օրվանից, ինչ հա-
տառվեցին սանատորիաներ, կարելի եղաւ
թերախտաւոր հիւանդների մահացու-
թիւնը պակասեցնել զգալի կերպով: Այն-
տեղ, ուր հիւանդների 25—60% չէր
գիմանում հիւանդութեան և մեռնում էր,
սանատորիայում կարողացաւ մահացութեան
տոկոսը իջեցնել 13—21%: Իսկ Առողջարար
ճովախներում կարելի եղաւ մանուկների
հիւանդութիւնները նուազեցնել մինչև
մի աննշան տոկոս:

Անկասկած՝ բժշկական գիտութեան
յայտնաբերութիւնները միկրոօրների, պա-
տուստոնների, անդամահատութիւնների
ասպարէզում շատ նշանաւոր և կարեւոր
տեղ են բռնում մարդկային ցեղի առող-
ջութիւնը ապահովելու գործում, բայց
դրանք միայն նպաստաւոր գործոններ են,
որ բնութեան պայմանները կարողանան
անարգել և ուժեղ կերպով հանդէս բերել
իրանց կարող և բուժիչ ազդեցութիւնը:

Մեր երկիրը ունի բուժական բազմա-
տեսակ պայմաններ իր մէջ, բայց չնայած
այն բանի, որ մենք չենք ստեղծել որոշ
հաստատութիւններ և կենցաղավարական
յարմարութիւններ, հիւանդ կովկասեցի
շտապում է հեռուները, գէպի եւրոպա-
կան բուժարանները, ուր մարդիկ աշխա-
տել են այն ամենը տալ հիւանդին, ինչ

առած միջոցներին՝ դադարեցնելու այդ ան-
պատեալ բաւտորը, այնուամենայնիւ
այդ նրան չէ աղողակում: Ուրիշ դիմակի տակ
կատարվող խորամանկ միջոցներից նա միշտ
խաբվում է: Մինչև 19-րդ դարի կէսերը, հրա-
պարակով, անգամ գրաւմանառնությունում,
ձեռնարկում էին կատարել ձեռք կազմած աղ-
ջիկների գրաւման (Lists of Ladies), ուր
կարգադրողը գտնում էր աղջիկների անունները,
ընկալարանների հասցեն, աղջիկների արտաքին
նկարագրութիւնը, հրապարակի գոյնքով և ա-
ռանձին յանձնարարականով ծրարաւոր էր:
Մեր անունով մի հեղինակ նմանը չը լըված
տեղեկութիւններ է հաղորդում ամբողջ 33
տարվայ ընթացքում ցուցակաղբով մի այդ
տեսակ կատարողի մասին, աղբով մօտ 8,000
օրինակ: Այժմ Բրիւսէլի գրադարանում գրա-
ւում է մի այդ տեսակ կատարող: Հիմա ար-
դէն, երբ անգլիական կառավարութիւնը վերջ
է տուել այդ խալտառակ պրօկլամացիաներին,
խորամանկ միտքը հնարել է այլ պայմանական
միջոց: Օրինակ, անգլիական մեծ թերթերի
յայտարարութիւնների բաժնում յաճախ կը
գտնէք անուններ, ուր կարծիք է յայտնվում,
որ իբր Անգլիայում և Ամերիկայում, այս ինչ
հասցէներով, այսքան սպասաւորութիւնը, դա-
տարականութիւնը, ընկերութիւններ և այլն հա-
կաւոր են այսպիսի մեծ ոռոգում: Այդ տեսակ
յայտարարութիւններից խաբվողները, որ ու-
կաւ թւում չեն լինում, մի անգամ ընդ միշտ

որ հնարաւոր է ներկայ գիտնական պա-
հանջների համաձայն:

Եւ ուշադրութեան արժանի է այն
հանգամանքը, որ մասնաւոր նախաձեռ-
նութիւնը այնտեղ մեծ դեր է կատարել
բուժարանների հիմնելու գործում և օրէ-
ցօր ընդարձակում է իր գործունէութեան
ծրագրիները:

Ժամանակ է, որ և մեր մէջ էլ խօսէ նա-
խաձեռնութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱՆ ԺԵԼԵԶՆՈՎՈՒԿԻՑ

Յունիսի 20-ին

Կովկասեան հանքային ջրերի մէջ ամենից
աւելի բարեյալող պայմաններէ մէջ կարելի է
վտան համարել ժելեզնիօվադի, որը գտն-
վում է 191/2 վերստ հեռավորութեան վրա
«Минеральные воды» կայարանից և 16 վերստ
Պետերգորսկից: Այստեղ գալիս են բժշկվելու
զանազան տեսակ, մեծ մասամբ կանանց և ե-
րեխաների մէջ տարածված հիւանդութիւննե-
րից: Դրա համար էլ իզուր չէ, որ ժելեզնիօ-
վադի համարվում է կանանց և երեխա-
ների կուրօրտ, թէն ջիւ չէ և այնպիսի-
նի թիւը, որոնք եկել են այստեղ իբրեւ ամա-
րանոց, իբրեւ տմենարտիւր և բարեյալողը
թուլացած առողջութիւնը վերականգնելու հա-
մար: Եւ ուղիղ այդ կողմից ժելեզնիօվադի հետ
միջոց կուրօրտ չը կայ այդ շրջակայքում թէ
իր միանգամայն հարուստ բնաստեղծական
բնութեան գեղեցկութեամբ և թէ այն մշակ-
ված և կատարելագործված յարմարութիւննե-
րով, որ տուել է նրան կառավարութիւնը, մա-
նաւանդ այս վերջին տարիները, ենթարկելով
նրան շատ մեծ փոփոխութիւններ:

«Минеральные воды» ասված կայարանից
գէպի Պետերգորսկ տանող երկաթուղու գծի
վրա գտնվում է մի շատ սիրուն կայարան,
«Вештаг» անունով, որտեղից դուր փոխադ-
րվում է մի նոր գծի վրա և այդ երկաթուղու
ձիւղը, որի երկարութիւնը ընդամենը 5 վերստ
է, տանում է ձեռք ուղիղ ժելեզնիօվադի: Դեռ
այնտեղ չը հասած, ճանապարհի կիսից արդէն
սկսվում է այն գեղեցիկ խիտ անտառը, որի
մէջտեղում փոխված է և րկաթ է սարի ստե-
րտում համանուն կողմ կուրօրտը: Այդտեղից,
ճանապարհի կիսից, շոգէմբանան սկսում է
աւելի մեծ ուժ գործադրել՝ գնացքը բարձրաց-
նելով և նա ծաղկի մէջ և վերջնականապէս

մտնում իրանց կեանքի յուսատու արևը:

Անգլիան ոչ միայն Եւրոպայի աղջիկ սեռի
վաճառման ընդհանուր կենտրոնն է, այլ և ա-
մենամեծ ապառողջիկայը: Ինչպէս ընդհանուր
փարթիւմ կեանքի շատ ու շատ երեւոյթնե-
ր, այնպէս էլ բարոյական կեանքի ապականու-
թիւնը Անգլիայում հասել է իր հըստիմ գրու-
թեան: Բոլորովին ջանքի կոյս աղջիկների վա-
ճառմանցները սպառելու ամենամեծ պա-
տուէրներ ասանում են անգլիացիները: Կու-
սութիւն խախտելու մասին չէ զարգացած
եւրոպական ցամաքային երկրներից ոչ մի
տեղ այն աստիճան, որքան Անգլիայում: 40
տարի առաջ—ասում է այդ խնդրին շատ լաւ
ծանօթ Պետերգորսկի համալսարանի բժշկու-
թեան պրօֆէսոր Թ. Տարնօվսկին—հաղիւ էր
աղբով 50 անգլիական սեղի մի «virgo in-
tacta» (անբծ կոյս) ձեռք բերել, իսկ այժմ 5
սեղի կարելի է այդպիսին հնչառութեամբ ճա-
րել: 40 տարի առաջ անկարելի էր համար-
վում համարձակվել աղջկայ անմեղութեան
մասին մի բան հարցնելու, իսկ այժմ անհրա-
ժեշտ է համարվում մի ոսկով բժշկից վկայա-
թուղթ ստանալ: Իրերի այս գրութիւնը ցոյց
է տալիս, թէ ինչ աստիճան զարգացում է այդ
երեւոյթը ներկայումս: Այդպէս ուրեմն, լո-
գերի հայրենիքը վամպիրի նման ծծում, քա-
նում է թափալ, մատաղահաս աղջիկ սեռի ա-
մենամեծ ուժ գործադրելով գնացքը բարձրաց-
նելով և նա ծաղկի մէջ և վերջնականապէս

նեղու գէպի արտի լանջը յաջորդաբար փոխ-
ված էր և այդպէս դուր, իբրեւ դիտող, զմայլում
էր բնութեան գեղեցիկ դասաւորութեամբ մի
կողմը անտառ սարերի մէջ, միւս կողմը ան-
վերջ ուղիղ և հարթ դաշտավայր՝ կանաչադեղ
դաշտ ու արտերով: Դուք այս տարածութեան
վրա համարեալ շարունակ բարձրանում էք եր-
կաթուղով գէպի սարը և ահա ձեր առաջ
վերջապէս երկաթուղու կայարանը և բանա-
ստեղծական ժելեզնիօվադի աւանը:

Մտնում էք դիւղը: Դուք համարեալ ամեն
տան մէջ կարող էք ընդունելութիւն գտնել,
այնքան յարմարեցրած են այստեղ շինութիւն-
ները եկողների համար, ամեն տան վրա հա-
մարեալ կացարան կան հետեւալ յայտարարու-
թիւնները՝ «отдаются квартиры, отпускаются
обеды». Պէտք է խոստովանվել, որ բնակ-
ութեանն էլ այնքան թանկ չեն, ինչպէս առաջ
էր, ամեն մարդ իր միջոցների համապատաս-
խան տուն կարելի է վարձել: Փայով ապրուս-
տին, նոյնպէս շատ մեծ յարմարութիւններ ու-
նեն առհասարակ այստեղի բոլոր կուրօրտնե-
ները: 50 կոպեկով դուք միշտ կարող էք եր-
կու տեսակ լաւ ճաշ ունենալ:

Փայով ժելեզնիօվադի արտաքին, այսպէս
ասած, արհեստական գեղեցկութեան, պէտք է
խոստովանել, որ ոչ մի միջոց չէ խնայված
կառավարութեան կողմից՝ տալ կուրօրտին այն
բոլոր յարմարութիւնները, որոնք նպատակ
են առանց ճանճարանալու այստեղ ապրելու:
Ամենից աչքի ընկնողն է այստեղի պարկը,
որը, ինչպէս բոլորը միաբերան վկայում են,
գերազանցում է եղած բոլոր այս շրջանի հա-
քային ջրերի պարկերին: Պարկի կենտրոնում
չինված է ամենավերջին ճաշակով զարդարված
և գոյնզգոյն ապակիներով զարկէլա, որը ան-
վանվում է «Պուշկինական»։ այս շինութիւնը
այնքան գեղեցիկ է, որ աւելին պահանջվում
չապրութիւն կը լինէր: Գալլէրէյան բաժանիվ
է երկու մասի, որոնց մէջ տեղում չինված է
էստրադա նուազածների համար, մի մասը
ծառայում է իբրեւ բեմ իր դասիկով՝ այս-
տեղ տրվող ներկայացումներին համար: (Մի-
շանկեալ պիտի ասեն, որ բեմի գեղար-
ցիկների շքեղութիւնը զարկ կարող են հա-
մարվել մեր դաւառական քաղաքների բեմերի
համար), միւսը մի լաւ հանգստանալու և վառ
եղանակներին պատուաւարկելու տեղ է: Գալլե-
րէյայի շուրջը մէկը միւսից պատահաւոր հե-
ռաւորութեան վրա դասաւորված են գեղեցիկ
ճարտարապետութեամբ չինված կիսակեր և
պաւիլիոններ: Մի տեղ կ'ու մի սոսայա,

րիւնը, նրա ողջ կենսունակութիւնը օտակալի
ազանութեամբ: Անգլիացու ամենամեծ հա-
ճաքը կուսութիւն խախտելու մէջ է կայա-
նում: Նա անկարող է իր ծայրահեղ մոլի կըր-
քոտութեան գոհացում տալ սովորական յարա-
բերութեամբ: Նա վարակված է ցաւ զգալու և
ցաւ պատճառելու հիւանդութեամբ...» 2)

Փաղաքակիրթ աղջկեր բարոյական կեանքի
մակարդակը լրիւ ներկայացնելու համար, կա-
րելի է, կարծում ենք, առաջ բերել, ինչ որ
ամեն բան իր վերին աստիճանի նողկալի
կողմերով, գէթ երեւոյթների հիմնական կէ-
տերը:

Անգլիան և Յիւնիսի, անգլոսաքսերի և բո-
մանների այդ հին կուլտուրական վայրերը, առ-
հասարակ հասարակական «վաքը ու բարձի»
սահմանում նմանը չը տեսնված «հաշիկ» են
վայելում: Դեռ 18-րդ դարում Լոնդոնում հիմն-
վել էին անգամ մանուկները պոռնիկա-
նոցներ (Kinderbordelle), ուր ժողոված
փոքրիկ աղջիկները ոչ աւելի քան 12—15 տա-
րեկան հասակ ունէին: Իսկ այժմ դա ամենա-
սովորական տարածված երեւոյթ է դարձել:
Ծրարաւորում այդ կարգի հասարակական տնե-
րի կենտրոնը համարվում է Մարսէլյով Անգ-
լիայում գտնվում են բացի գրանցի նաև հա-
սարակական տներ, բաղկացած տղայ մա-
նուկներից, որոնցից իւրաքանչիւրի ապա-
կանութիւնը գնահատվում է ոչ աւելի քան 10

1) Տես դոկտոր Լ. Կոստի նոյն գիրքը, կրկ 21.

2) Dühren, „Das Geschlechtsleben in England“.

որտեղ թարմ կուսիս են ծախում, մի ուրիշ տեղ ընթացաբար են գրատուներ, որը բաց է վաղ առաւօտեան՝ ժամը 8-ից մինչև 1-ը և երեկոյեան 3-ից մինչև 7-ը, որտեղ ամեն մի եկուոր, որը սեզօնի տոմսակ ունի, կարող է Կովկասի և Ռուսաստանի բոլոր աչքի ընկնող լրագրները կարգաւ, իսկ մէկ բուրձի վճարելով ամսական և օգտվել գրադարանի գրքերից: Պարկի գանազան ծայրերում շինված են և դրո-ված բուսականներ, որտեղ ֆոտոտիպ տեսարան-ներ և թանկագին իրեր են ծախվում:

Ամենից շատ գրաւիչ և զբաղեցնողն է, մա-նական հրեկանների համար, այն փոքրիկ, բայց զգալի հրեկանները, որը կոչվում է «ПЛО-ЩАДКА ДЛЯ ДЕТСКИХ ИГРУШЕК»: Այստեղ կարող է մուտք ունենալ այն երեխան, որը վճարում է ամբողջ սեզօնի համար մէկ բուրձի (իսկ մի և նոյն տան մնացած երեխաների համար հար-կաւոր է առ միայն 50-ական կօպէկ), որտեղ հաւաքված երեխաները, զեկավարութեամբ եր-կու մասնագէտ օրիորդների, խաղում են դա-նազան տեսակ խաղեր: Ուղեբեր լինում են ամեն օր, առաւօտեան ժամը 9-ից մինչև 11-ը, իսկ երեկոյեան 5-ից մինչև 7-ը: Իսկ շաբաթը մէկ անգամ էլ, այդ մի և նոյն օրիորդների առաջնորդութեամբ, խաղերին մասնակցող բո-լոր երեխաները կազմում են զօտանք զէպի-ժերիզօօլօգիկ զեղեցիկ շրջակայները:

Մի և նոյն այդ պարկի մէջ են զետեղված մեծ մասամբ բոլոր այն հանգային ջրերի վան-նաների շինութիւնները, որոնք իսկապէս ծա-ռայում են իբրև փառք ու պարծանք Ժերիզօ-օլօգիկ համար: Դրանց կողքին առանձին դուրս են բերված այդ իսկ հանգային ջրերի աղբիւ-րները, որոնք նշանաւոր են իրանց երկաթեայ ամենախոշոր բաղադրութեամբ և շատ են նպաստում թոյլ և հիւանդ մարմնի կազդու-րվելուն, որոնց օգնութեան է գալիս այստեղի հրաշալի օդը, որը այնքան ազահուութեամբ ծը-ծում են եկող հիւանդները: Պակաս զեղեցիկ չեն և գիւղի մէջ գտնված տները, որոնք մեծ մասամբ շինված են զեղեցիկ ճաշակով և վե-րածված են միանգամայն, ուղիղ փողոցների վրա դասաւորված:

Այստեղ, ընդհանուր առմամբ, բոլոր կուրօր-տաները միշտ հետաքրքիր են գլխաւորապէս նրա-նով, որ ամսական 3-4 ամիսը կեանքը վերա-տում է այդտեղ, եկող զննողները միշտ կան ու կան, ամեն մի կուրօրտ օրական 16 անգամ երկաթնուղու գնացքներ են մտնում, որոնք միշտ բերում են նորմոր մարդիկ և դուք ա-ռանց ձանձրանալու ամբողջ օրը անց կաց-նում էք զբոսանքներում: Գլխաւոր կենտրոնատե-ղին ծառայում է պարկը, որտեղ ժողովում են բոլորը մի կողմից այստեղ գտնված հանգային ջրերը խմելու, միւս կողմից էլ լսելու զեղե-ցիկ կազմակերպված օրկեստրին, որը ամուս է ամենայն օր թէ առաւօտ և թէ երեկոյ, որո-շեալ ժամերում:

Շատերի պատմելով այս մի քանի տարիների մէջ այն բարեփոխութիւններն են եղել այստեղի կուրօրտներում, որ եթէ այսպէս շարունակվի, այն ժամանակ Ռուսաստանի կովկասեան կու-րօրտները կարող են ազատ մրցել արաւասա-մանեան կուրօրտների հետ, որը հէնց այժմից

երևում է, տարեց տարի գրաւելով աւելի շատ և առաջնակարգ շրջաններից հիւանդներ և ա-մարանոց եկողներ:

Ի. Տէր-Իսահակեան

ՆԱԴԵԿ ԱՍԽԱՐԱԴԻՑ

Թուիսի 18-ին

Նպաստաւոր հանգամանքներին չնորհիւ՝ հէնց այսօր կատարում եմ անցնել թղթակցութեան մէջ յիշած խոստումս, այն է՝ գրել, թէ ինչ նպատակի է ծառայում մեր հասարակական ժողովարանը իր այգիով:

Ախարաբի հասարակութեան որոշ դասը, ամբողջ հրատապ ամառվայ ընթացքում, չու-նենալով մի այլ հասարակաց զբոսավայր, վե-րոյշեալ ժողովարանի այգին միակ վայրն է համարում, որտեղ ցերեկվայ զօրնային շո-գերից յետոյ նարաւորութիւն է ունենում իր յոյնած ու գրեթէ անդամահատված մարմինն անգործութիւն տալ Սակայն, իբրև մի հա-տարակական հիմնարկութիւն, այդ ժողովարա-նի գոյութիւնը արդեօք կրթական որոշ ար-դիւնքներ էլ տալիս է նրան, թէ ոչ, ահա այդ քննելու մենք համառօտապի կերպով: Անցեալ թղթակցութեամբ ընթերցողը արդէն գիտէ, թէ ինչ գոյնի մարդիկ են եղել մեր ժողովա-րանի զեկավարները, որից անշուշտ կարելի է եզրակացնել, թէ ինչ դուրսեան մէջ կարող է լինել այդ խեղճ ու կրակ հիմնարկութիւնը:

Ձը նայած յաճախորդների հաւաքին հոսան-քին, մանաւանդ ամառ ժամանակ, որից ժո-ղովարանի զեկավարները խրախուսված, պէտք է աւելի բարոյակրթական զուարճութիւնների վրա մտածէին, վարչութիւնը թուիչ զբաղված է բուֆէտի գործերով, լուրջ ուշադրութիւն է դարձնում լոտօյի և կանաչ սեղանների վրա... Մտնում էք այգի, ամեն տեղ փայլում են կանաչ սեղաններ, որոնց շուրջը բոլորած են ջերմ երկրագործներ, որոնք արդէն սովոր են ցերեկ շոգից ջրանել, իսկ գիշերը՝ չարաժա-տիկ թղթակցալից, որը նրանց բոլորեցում է մինչև ինքնամոռացութեան է հասցնում: Այ-գու ալ կողմը տեղաւորված են լոտօյի համար հակայական սեղաններ, որոնք անձրեկից պա-տապարված են զեղեցիկ ծածկոցի տակ, և այդտեղ ամեն անգամ անուշազը 100—150 հոգի են տեղաւորվում և լարված ուշադրու-թեամբ լսում թուանշանները բարբառող աղա-սախօսին, որը կանգնած է լինում բարձր շի-նած ամբիօնի վրա: Այդտեղ նստողների մէջ կան և՛ բուրժուաներ, և՛ թուրք բախկալներ, և՛ էփանդիկ ինտելիգենտներ, և՛ կանայք, ո-րոնք արդէն այդ սեղանին կպած են... Վեր-ջապէս չերկարացնեմ մի կողմ նստողները, միւս կողմ բուֆէտ և այլն և այլն և այլն: Այգին լցված է լինում թուրք խաղաղոցների, լոտօյակների, նարդիների և ուտող խմող-ների խառնիճադանչ և վայրենի աղմուկներով:

Բայց, ընթերցող, այդ այգու ձախ անկիւնի խաւարում կայ մի օղաւոր, որ ամենից ատ-ված, ամենից արհամարված՝ գլխիկը ընկած է անզգայականութեան մէջ... դա՛ մեր ժողովա-րանի ապարդիւ թատրոնն է... այնքան խա-ւար ու մոայլ է, այնքան օտար ու խորթ է

ընակարանի գիշերելու: Անուշաղ աղիկը մեն-մենակ, խոր անձկութեան մէջ, հետեւում է նրան: Դրանից յետոյ արդէն ամեն բան կատա-րեալ է: Վաղ առաւօտեան փողոցային օրիկան իր ձեռքն ընկած զուր, որպէս օտարի, վաճա-ռում է իր պայմանաւորված կլիենտի վրա 10—20 ֆունտ օտարիւնքով:

Թէ ինչ քրտածմիկի, աղիկողմ միջոցներով են ուղղակի հասարակական տներ բերված դե-տառա կոյ աղիկներին անպատվում, նրանց կուսութիւնը խաղաղում մեծավճար գներով, այդ արդէն, պարզապէս նկարագրել, մեր ոյ-ժից վեր է Մենք օտարում, զարգանք ենք զգում այդ պատկերների առաջ, թէ և միւս կողմից իբրև քաղաքակրթ կեանքի անյատկա-բացատրականութիւն, ժամանակակից կուլտու-րայի մի բնորոշ երևոյթ, պարտաւոր է ինչը մերկացնել իր լրիւ գծերով:

Մի այնպիսի բարդ, գաղտնի ու խորագի-միջոցներով առաջ տարվող միջնադարին առե-տուր, ինչպիսին աղիկների վաճառքն է, ընա-կանաբար, պահանջ ունի շատ գործող ոյժերի, ձեռնարկութիւնների: Ինչպէս օտարական նիւ-թերի առևտուրը, այնպէս էլ մարդկային մի-վաճառքը, կատարվում է առևտրի երեք կար-գի ֆունկցիօնների միջոցով. մեծ (Engros-handel), միջին (Sortimentgeschäft) և փոքր կամ դիտում (Kuplerthum) ձեռնարկութիւններ: Ձը կայ եւրօպայում մի երկիր, ուր այդ կարգի ձեռնարկութիւնների և այդ տեսակ առևտուրը

այդ անկիւնը, որ նորեկ յաճախորդի հայեացքը հազիւ թէ անդարդառնայ այդ չարաբաղդ բեմի վրա: Առաւել կեկեցնող փաստը այն է, որ այդ հիմնարկութիւնը երբեմն ստիպված է լի-նում պատուապարհ թուղթ խաղացող այն պա-րոններին, որոնք անձրեկի փակչելով՝ այդտեղ (բեմի վրա) են տեղաւորում իրանց արքու-թիւն-արքուրը—կանաչ սեղանները Եւ այդ-պէս՝ կեանքի դպրոց անուրը կրող հիմնարկու-թիւնը, զեղարուեստի անուշով կառուցված սուրբ տաճար՝ անխնայ կերպով սրբապղծված է յանուն մարդկային անբարոյականութեան... Ահա, քրպիսի ընդունակութիւններ ունենք հայերս, մեր հիւրանոցային ճաշակներով կուր-տներ զեկավարել, թատրոններ պահել, հասա-րակական հիմնարկութիւնը մեր անհատական քառանգանքներին ծառայեցնել: Սակայն եթէ այդ հիմնարկութիւնը լինէր աւելի խելացի, ճշմարիտ ինտելիգենտ զեկավարների ձեռքում, անշուշտ կրթական որոշ նշանակութիւն կունե-նար նա հասարակութեան աչքում: Բայց ինչ է ներկայացնում նա այժմ. դա այժմ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հիւրանոց, ուր, թող ներվի մեզ ասել, անբարոյականութիւնը թղթակցալի, լոտօյի և դոյնանման երևոյթների տեսակետից, միանգամայն ակներև է: Դէ, պարոն զեկավար-ներ, ասացէք այժմ ինչ են սովորելու ձեռ-մանկահասակ—աշակերտ որդիք իրանց ընկեր-ների հետ, որոնք առաջին թւով յաճախում են այդտեղ...

Սուրխաթեան

ՆԵՐՔԻՆ, ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւալ համարը Ե. Սահակ և Մեսրոպ Թարգմանիչների այսօրվայ տօնի ա-ռիթմով լոյս կը տեսնի ոչ թէ վաղը, այլ շաբաթ, յունիսի 28-ին:

Մայրաքաղաքի լրագրիներում կարգում ենք. «Հասան-խան-Մուշի» — Մուշիի Պետերբուրգի պարսկական դեսպան նշանակելու հետ կապ-ված է Ռուսական թուրք պարսկական հիւ-պատոսարաններում հիմնական փոփոխութիւ-նի մտցնելու հարցը: Անցագիրներ տալու նախկին կարգը, որ միջոց էր տալիս կատա-րելու զանազան զեղծումներ, և հնարաւորու-թիւն էր ընծայում զանազան մութ անձնաւո-րութիւնների գնել հիւպատոսներից ազգային անցագրեր, հիմնվելով երեք վկաների ցուցում-ների վրա, այժմ, «ОД. НОВ.» լրագրի տե-լով, ոչնչացրած է: Մտքած է անցագրեր տա-լու նոր կարգ. այսուհետեւ անցագրեր կը տրվեն միայն հին, ազգային անցագրի փոխարէն: Բացի դրանից մեծ օրերումս վերջապէս Օղես-սայում այն պարսկահպատակների առաջին ցուցակագրութիւնը, որոնք գտնվում են Ռու-սաստանում: Բոլոր պարսկահպատակների ա-նունները մտցնվում են հիւպատոսականների ցուցակների մէջ և նրանցից իւրաքանչիւրի մասին առանձին տեղեկութիւններ են հաւաք-վում հայրենիքում:

Թիֆլիսի դոմայի ձայնաւոր և Թիֆլիսի քա-ղաքային կրէդիտային ընկերութեան վերա-

ուղղակի, թէ անուղղակի կուրծ դարձրած մարդկանց թիւը այնքան շատ լինի, որքան Անգլիան ունի 2ը կայ նաև մի երկիր, ա-սում ենք, ուր այդ դասակարգը այն աստիճան ցինկաբար ու ասորաքաշ կերպով վարէր իր անառակ կոչումը, ինչպէս Անգլիայում Դեռ 1790 թ. միայն լծողներում կային 2000 հոգի, երկու տարեք, որոնք միջնապէս թէ անմիջա-պէս իրանց ապրուստը այդ առևտրի մէջ էին որոնում: 1850 թ. արդէն այդ քանակը աւելի քան կրկնապատկվել էր՝ մօտ 5000 հոգի, իսկ յիսուն տարեց յետոյ, այսինքն բարձրի ա-պակաւութեան նորագոյն շրջանում, այդ մարդ-կանց թիւը հասնում է մօտ 400,000 հոգու: Ուրեմն կէս դարու ընթացքում եղած քանա-կը մեծացել է 80 անգամ, այն էլ, լու լսե-ցէք, միայն լծողներում: Ձը կայ մի դասակարգ, կեանքի այն աստիճանից յոյժանում, որ ծա-ւալման այդ առաքինի կօրսով չափեր ունե-նայ Գրեթէ նոյնպիսի արագութեամբ աճում է հասարակական տների և ապականված սեռի քանակը: Լծողներում գտնված բոլոր պրոնկա-տոցների թիւը 19-րդ դարու կիսում կազմում էր 5000, իսկ պրոնկայինը նոյն դարու 60-ա-կան թւականներին հաւասար էին մօտ 80,000, այժմ գրեթէ երկուսն էլ կրկնապատկվել են, առաջինը՝ 10,000, իսկ երկրորդը՝ 150,000: «Մատաղական պոստիկների թիւը աճել է այժմ աւելի ու աւելի, քան վերջին 25 տարվայ ըն-թացքում: Դժբաղդ, անգործ կանայք, կարծես

հօկող կօմիտէտի նախագահ Ի. Թալիբեան, որ մօտ օրերումս վախճանվեց, 7000 բուրձի է կտակել հետեւալ հիմնարկութիւններին.—2000 բուրձի Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցին այն պայմանով, որ այդ դոմային համարվի անձեռնամխելի և նրա տոկոսով պահվի մի թոշակաւոր աշակերտ, 1000 բուրձի Թիֆլիսի կուսանաց վանքին, 1500 բուրձի Շամբուրեցոց եկեղեցուն և այլն:

Երեքաթիւ յունիսի 24-ին, վրաց ազնա-կանութեան թատրոնում տրվեց առաջին ան-գամ Թիֆլիսում Մակիմ Գորկիի «Յատակում» «На дне» նոր պիեսը: Թիֆլիսում այդ պիեսը ներկայացվում է շատ ուշ, այն ինչ բոլոր մեծ քաղաքները և նոյն իսկ փոքր քաղաքներից շատերը մի քանի անգամ առիթ են ունեցել տեսնել նրան բեմի վրա: Նոյն իսկ Անդրկով-կասի միւս քաղաքները տեսել են այդ պիեսը, իսկ Թիֆլիսը միայն այժմ է տեսնում Վախ-տիսօվի խմբի չնորհիւ Այդ պիեսի մէջ դուրս է բերված ստորին դասակարգի մարդկանց մի խումբ, որոնց մէջ կան արեւցոթեան իրանց մասնած, գողութեամբ պարապող, բանտից դուրս եկած, հարստութիւնից զրկված մի շարք անձնաւորութիւններ: Հեղինակը, հանդէս բե-րելով այդ տիպերը և ներկայացնելով նրանց մէջ մարդկային անհատի անկումը, ձգտում է ցոյց տալ, որ մարդկային, մարդկայնութեան զգացմունքը օտար չէ այդ անձերին և որ նրանց մէջ երեքնիսպէս խօսում է աւելի լաւ վիճակ ունենալու տենք, լավում է ավտոսանք անցեալի վերաբերութեամբ: Կատարումը մի-ջակ էր: Աչքի էին ընկնում դերասանի դե-րում՝ Վախտիսօվ, բարձր դերում Կրասովին Սաախին դերում Կազանսկի: Դերասաններն-րից Վօլինսկայա (Վասիլիսա), Անգարով (Նա-տալա) և Կօրսովա (Նատալա): Թատրոնի երեք քառորդը լինել էր: Ներկայացումը երէկ երե-կոյան կրկնվեց նոյն թատրոնում:

Թիֆլիսի չերամպայական կայարանում այս յունիս ամսի 24-ից սկսվեցին գործնական և տեսական կուրսեր չերամպայականութիւնից և մեղուապահութիւնից: Պարապուսները տեղի են ունենում ամեն օր, սկսած առաւօտեան ժամի 8½-ից: Կուրսերը լսել կարող են բոլոր ցանկացողները:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ այս օրերս վախճանվել է Մօզիէվի նա-հանգի իր Գոմէլ կալուածքում գնեքարալէյտե-նանտ Պասկէվիչ: Ինչպիսիւր գնեքարալէյտե-նոյն Պասկէվիչի միակ զուրկ, Կոմար Վոմար-ճանվեց 80 տարեկան հասակում, պատկան էր կոմսուհի Վօրոնցովա-Դաշկովայի հետ և ան-դաւակ էր:

Հասարակութեան յարմարութեան և պօս-տային աստիճանաւորների գործը թեթեւացնե-լու համար՝ պօստային գլխաւոր վարչութիւնը կարգադրել է փոխել պատուիրված նամակ-ներ ընդունելու կարգը: Այն անձինք, որոնք կանխում են ուղարկել պատուիրված նամակ-ներ, պէտք է յանձնեն նամակները ոչ պօստա-

ընկերութիւնից դուրս վաճառված մի տեւորող մասնիկ են կազմում... 1) ասում էր Մարքսը 70-ական թւականներին, երբ իր հանձնարող երկի մէջ սուր քննադատում էր ի միջի այլոց Անգլիայի բանւորական տնտեսական կեանքը: Պոնտիկների քանակի աճման գրեթէ նոյն ցուց-մունքներն ենք գտնում և ուրիշ երկրներում: Պարիզում կատարված վերջին վիճակագրու-թիւնը հայտն է մօտ 120,000, Բերլինում՝ 50,000, իսկ ամբողջ Գերմանիայում չորս ան-գամ աւելի, մօտ 200,000 պոստիկներ: Այս խո-շոր թւերը բաւական են արդէն մեզ համո-զելու, ընթերցող, թէ զեղեցիկ սեռը որքան զգալի տոկոս է իրանից պոկում, դէն ձգում, գլորում անյատկ անդունդի մէջ: Աւագու-թեանը շատ զեղեցիկ կերպով նկատում է, իր նշանաւոր աշխատութեան մէջ, այդ ախտի անարգել ծաւալման մասին այսպէս. «Հասա-րակական տների գոյութիւնը դարձել է քա-ղաքացիական ընկերութեան համար մի այն-պիսի օօգիտական անհրաժեշտ ինտրուստ, ինչպէս, օրինակ, ոստիկանութիւնը, զինուորա-կան կազմը, եկեղեցին և այլ հաստատութիւն-ներ» 2):

(Յը շարունակվի)

1) Karl Marx, „Das Kapital“ I հատ. 4 հրատ. էր. 424.
2) August Bebel, „Die Frau und der Socialis- mus“, 34 հրատ., էր. 174.

ՄԵԼԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 յունիսի

ՀԻՍՄ. Պապը անցկացրեց անհանգիստ և անքուս գիշերով Ընդհանուր ինքնագիտակցութիւնը քննարկելու և Պատճառ կայ ներկայիս, որ լատինական (լատինա) հեղուկ կայ Մաադիր են ծակել: Ներկայումս գործողութիւնն անբաւարար է: Մատերի ծայրերը կապագիւ են: Բժիշկները կարծում են, որ կատաստոֆը շուտ չի պատահի: Բայց այդ բանը հնարաւոր են համարում, աչքի առաջ ունենալով պապի չափազանց թուլութիւնը:

Կ. ՊՈԼԻՍ. Սալոնիկում նորից լուրեր են պատմում, թէ նոր փորձեր պէտք է սպասել կոմիտէների կողմից: Իրականում և աւստրո-ունգարական դեսպանները Բ. Դոման ուղարկութիւնն հրաւիրեցին այդ լուրի վրա: Բ. Դոման հարցում արեց Սալոնիկի վալիին, որը պատասխանեց, թէ ապահովեցնում է կարգ ու խաղաղութիւն պահպանելու Այստեղի քաղաքական շրջաններում կառուած է յարուցանում այն լուրը, թէ Բալգարիան մտադիր է մի ուլտիմատիում դիմել Թուրքիային: Եթէ նոյն իսկ ճիշդ լինեն թուրքական զորքերի կենսաբանական մասին եղած լուրերը, այնուամենայնիւ Բալգարիան իրաւունք չունի բողոքելու: Կրօնականների անկարգութիւնների պատճառով, որովհետեւ այդ հրահրականները բարոյական և զինուորական օգնութիւն են ստանում Բալգարիայից, որին բալգարական կառավարութիւնը, որքան էլ որ ուղեկայ, անկարող է արգելել: Բ. Դոման գործադրում է բացառիկ միջոցներ: Թուրքիան պէտք է անպատճառ այդպիսի միջոցներ ձեռն առնէ, հինգ որ վերջացնէ իր զինուորական գործողութիւնները խառնակիչ ալաւանքներով դէմ Բ. Դոման ստիպված է այդ անկող: չորհրդով Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի ճնշման, որոնք պնդում են բարենորոգումներն իրականացնելու վրա: Նրանք, Բ. Դոման և քաղաքական շրջաններում յայտնաբերում են ինքնիշխան և բալգարական կառավարութիւնը ինքնիշխան կը պահեն իրանց և չեն գրավի յետագայ չը մը: Կառավարութիւնը միջոցներ է Բ. Դոման պատերազմական ցանկութիւններ չունեն և ծածուկ ոչ մի զինուորական պատրաստութիւն չեն տեսնում:

ԼՈՆԴՈՆ. Բոքսթոնը (Իրեքս) — համայնքների ժողովում հարցնում է, թէ արդեօք կառավարութիւնը համաձայն է Սալոնիկի 1899 թ. փետրվարի 14-ին խփած հեռագրին, որով ընդունված էր ուսաց կառավարութիւնն առաջարկութիւնը խաղաղութիւն համաժողով հրաւիրելու մասին և արդեօք կառավարութիւնը յանձն չի առնէ: Կառավարութիւններն ընկնելու ծովային զինուորական ոյժերը պակասեցնելու հարցը: Բալթիկ յայտնեց, որ կառավարութիւնը չէ փոխել իր կարծիքը: Եթէ մեծ պետութիւնները համապատասխան առաջարկութիւն անեն, մենք ուրախութեամբ կը միանանք, բայց պէտք է յիշեցնել, որ անգլիական նաւատորմի համար եղած ծախսերը զլիաւորապէս պաշտպանողական ընտանրութիւն ունեն, իսկ միւս նաւատորմները այդպիսի բնաւորութիւն չունեն: Այդպիսի հանգամանքներում ուրիշները պէտք է զարթոցեն այդ հարցը:

ՊՐՏ-ԱՐՏՈՒՐ. Գունիսի 22-ին հանդիսաւոր կերպով, զենեքայ աղիւստան Գուրպապիկինի և ծովագետ Ալեքսանդրի ներկայութեամբ Խննդէնայի եպիսկոպոսը դրեց տաճարի հիմքը:

ԴՈՒՎԻ. Եւրոպական զինուորական պատասխանելով, Լուբէն ասաց, որ նա բերում է ամենքի համար պարզ ապացոյց երկու երկիրների բարեկամութեանը Ներկայիս զինուորականներն էլ միատեսակ հոգ են տանում խաղաղութիւն պահպանելու մասին:

ԼՈՆԴՈՆ. Լուբէն ժամանեց Վիկտորիա կայսրանը, որտեղ նրան զիմաւորեցին թագաւորը և թագաւորական ընտանիքի անդամները: Թագաւորը և Լուբէն ուղեւորեցին Իռլանդի կղզի: Եւրոպական զինուորականները, որ իբր թէ Ռուսաստանի և Միացեալ-Նահանգների ինչու տեղի ունէին բանակցութիւններն այն մասին, որ Միացեալ-Նահանգների նախագահը զիմաւորութիւն էր յայտնել յանձնել Ռուսաց կառավարութեանը ամէրիկական հրէաների խնդրաւորութիւնը: Գիշերելով տեղի ունեցած զէպերի առթիւ: Միացեալ-Նահանգների կառավարութիւնը այդ առթիւով ոչ մի յայտարարութիւն չէ արել: Բայց եթէ նա մինչև անգամ վստահանար այդ անկող, Ռուսաստանը ի հարկէ կը կարողանար իր ներքին գործերին մի այդպիսի միջամտութիւնը համապատասխան կերպով պատասխանել:

25 յունիսի

ՏՕՄԻ. Տեղի ունեցաւ հոգեկան հիւանդանոցների համահայկան հիւանդանոցի հիմնադրում:

յին բաժանմունքներում աստիճանաւորներին, այլ աւին մի պատահած պոչաւորներ, որն իսկոյն նամակի վրա կը կպցնէ նամակագրոյմ և կը ապա անորոգաբեր ապահովված նամակն ընդունելու մասին:

«ՀԱՅԿԱՅ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից: «С. Петербургскія Вѣдомости» լրագրերը անցնում է Վ. Վերիլյուի ձեռքը:

ՆԵՐՍԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻԾ մեզ գրում են. «Ահա երեք օր է, որ աստուկի մորեխ է եկել, մօտակայ գիւղից համարեա կանաչ բան չեն թողել: Սեխի, ձկնորակի, բամբակի արտերը ոչնչացրված են, իսկ ցորենին չեն ձևաւորում, քանի որ քաղցրու ժամանակ է: Նոյնական էլ շատ շոգ է: Երկու ամիս է անձին չէ եկած և այդ պատճառով էլ ցորենը 80 կօպէկից բարձրացաւ 1 ր. 25 կօպ., իւղը 13 ր.—14 ր. հաւարակ պանիրը 3 ր.—4 ր. ոչխարի միւր 13 կ.:

ՎԵՐԻՆ-ԱԶԱ գիւղից (Ներսիսի նահանգ) մեզ գրում են. «Ներկայ տարվայ գարունը մի չէ տեսնված բան էր աղեղների համար: Ապրիլի մայիս և ահա յունիս ամիսն է, ինչ անձրեւներ չենք տեսել: Եւ նոյն իսկ քամին էլ մոռացել է մեզ: Եւ ահա գարնանային կենսատու եղանակը նպատեց թէ մեր և թէ չրջակայ գիւղացիների աշխատանքներն» պատճառին չափ բաւարար բերք տալով: Եւրոպականութիւնը, բոժոժը երբեք այնքան բերք չէր տուել, ինչքան այս տարի: Անցեալ տարիները իւրաքանչիւր 1 միսալ սերմից հազիւ-հազ ստացվում էր 12—17 ֆունտ թաց բոժոժ, իսկ այս տարի ստացվեց 25—30—32, համարեա թէ օտարականից կրկնապատիկ աւելի: Թաց բոժոժի արժէքն այս տարի լաւ էր 16—19 ր., այն ինչ 5—6 տարի շարունակ 12—13 ր. ոչ աւելի: Հաղանախիկները այս տարի չափազանց հասկեր օսեն, բայց, դժբաղդաբար, վարելահողի պակասութիւնից երկրագործութիւնը գիւղացու պարագայութիւնների մի չնչին մասն է կազմում: Տեղում գիւղացիների զլիաւոր պարագայութիւնը չի բաւարարում: Եւ այդպէս գործութիւնն է: Ծորենի գինը կրկնապատիկ թանկացել է, մի ամիս առաջ, 1 օրը 60 կօպէկով ծախվող ցորենը այժմ ծախվում է 1 ր. 20—30 կ.: Մրգեղենների առատութիւն է:

ՆՕՂԱՅԱՅԻԾ մեզ գրում են. «Շուտով լոյս կը տեսնի Նօղայոսի հայոց խախկն ծխաւոր, իսկ ներկայումս Բաճուրա կայոց աղօթատան Սարգիս աւ. քահանայ Մաքսիմաճեանցի ուսուրէն լեզուով: «Краткій очеркъ истории армянской церкви» հեղինակութեան երկրորդ հրատարակութիւնը մեծ յաւելումով, որից ստացած իրովի արդիւնքը յարգելի տէր հայրը, մտնելով տեղին ու. Առաքանածնայ եկեղեցու ցաւալի գրութեան մէջ, ամբողջովին յատկացրել է վերոյիշեալ օգտին:

ՀԱՆԴԱՄԵՋ գիւղից (Հին-Նախիջևանի գաւառ) մեզ գրում են. «Միմիայն մի միւրթարական բան կայ Հին-Նախիջևանի գաւառի շրջակայ գիւղերում, այդ այն է, որ չի բաւարարում թիւնը տարեց տարի զարգանում է: Եւրոպականութեամբ են պարագայում ամենքը, առանց բացառութեան: Մէկ վաճառականից անդիկութիւններ հարցրել և իմացայ, որ այս տարի Հին-Նախիջևանի գաւառը աւել է մօտ 1800 պուղ բոժոժ, որի պուղը ծախվում է 15—16 պուղու, ուրեմն մօտ 27—28 հազար բուրբուր միայն բոժոժ են ծախում: Հին-Նախիջևանի գիւղացիք, Պէտք է ասած, որ շատ նպատակայարար և օգտաւէտ աշխատանք է չի բաւարարում գիւղացու համար, որովհետեւ նախ շատ չնչին ծախս է պահանջում և երկրորդ չի բաւարարում: Եւ պարագայում միայն կանաչը Տղամարդիկ բուրբուրն չեն օգնում կանանց այդ գործում: Ընդհանրապէս Նախիջևանի գաւառում կանանց գործիւնը շատ անտեսելի է և աննախանձելի: Ողամարդիկ պանդխտութիւնից երեք-չորս տարին հազիւ մէկ անգամ տուն են վերադառնում և այն էլ շատ կարճ ժամանակով: Հանդամէջ գիւղը բաղկացած է 15 տնից. մենք գտանք այդ գիւղում ընդամենը 32 հոգի: Ողամարդ, կին և երեխայ, իսկ ընտանիքների թիւը այդ գիւղում հասնում է մօտ 800-ի. ցաւալի է կանանց գործիւնը. 3 ռոյաւարդ կար այս գիւղում:

ՎԵՐԻՆ-ԱԶԱ գիւղից (Ներսիսի նահանգ) մեզ գրում են. «Մի երկտաւարդ Գարեւանի գիւղացի ուղեւորվում է հայրենիք ամուսնանալու: Նպատակով, հենա են լինում իր ժողը և մի

քանի ուրիշ ընկերներ: Հանելով Ջուլֆա, ամիս 10-ին, քրոջը թողնում կայարանում, իսկ ինքը ընկերներով գնում է մօտիկ Արաքսը լո-ղանալու: Հողանալու ժամանակ զոր է գնում Արաքսի կատարած ալիքների յորձանքներին: Դիակը մի քանի օրից յետոյ գտնվում է Նալի գիւղի մօտ, Արաքսի հարաւային մասում, Գարակատանի սահմանում, Ջուլֆայից 7—8 վերստ հեռու: Դէպի արեւելք Հանդուցեալի բա-րեկամները գիւղից տեղիս սահմանապահ զինուորների հրամանատարին, որից թոյլաւորութիւն ստանալով՝ դիակը անցկացրին Ռուսաստանի սահմանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՆԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՐ

Այն ժամանակ, երբ Բուլղի փաշան բազմա-թիւ զօրք ու թնդանօթներով չրջապատել է լեռնաւան Սալանիս և ուղւում է խաղաղեցնել նրա ընտան քաւակներին. այն ժամանակ, երբ Բ. Դոման շարունակ հաղորդագրում է քաղա-քական մարմիններին, թէ կարգը հաստատված է ալաւանկան լեռներում: Ինտելիգենտ ալաւ-նացիների մի բազմամարդ խումբ իտալական Նէապոլ քաղաքում հաւաքված, մերթ ընդ մերթ հնչեցնում է.

—Viva l'Albania! Viva il Re d'Italia!
«Ենցեք Ալբանիան, անկախ Ալբանիան» — այդ են կամենում խմբված ալաւանցիները, այդ է նրանց համաժողովի կէտ նպատակը: Առաջին անգամ չէ, որ Իտալիայում ալաւանկան հա-մաժողով է գումարվում: Մի քանի անգամ տեղի են ունեցել այդպիսի ժողովներ, բայց դրանք բոլորն էլ միայն ալաւանկան ձեռով հայրենասիրական ճանք են արտաւանդ, դա-տարի ցանկութիւններն յայտնել և առանց մի զարկան հեռք թողնելու հեռացել: Իսկ այս վերջին համաժողովը, իր հայրենիքի տաքնա-պալի վիճակի աչքի առաջ ունենալով, աւելի իրական հողի վրա է կանգնել, աւելի կենսու-նակ հարցի մասին է խորհրդակցել: Իտալիա-յում կազմել ձեռքներն ալաւանցիների մի զանապաղութիւն և նրա մէջնողով համախմբել տարագիր եղած ալաւանցիներին, պաշտպանել նրանց և աշակցել անկախ Ալբանիա՝ օտեղ-ծելուն — ահա այդ հարցը:

Այժմ հարգիւններ հաղորդում են, որ ալաւ-նական համաժողովը արդէն վերջացրել է իր զբաղմունքները և փակել Նիտոնը: Զբաղմունք-քի ամենազլաւար կէտն է եղել յիշեալ դաշ-նակցութեան ծրագրին ու կանոնադրութիւնը, որ և հաստատված է վերջականապէս: Այդ նոր լիբայի կենտրոնական մարմին անդամներ ընտրված են գլխաւորապէս ալաւանցիների պատմական հերոս Գաւորիս Սկանդերբեգի ժամանակներից:

Համաժողովը վիկտոր Էմանուէլ թագաւորին ուղարկել է մի հեռագիր հետեւեալ բո-վանդակով: «Ալբանական IV համաժո-ղովը, որի նպատակն է միացնել իտալապա-տակ ալաւանցիներին և օգնութեան հասնել բնիկ հայրենիքին, ցարկանալով, որ Ալբանիան ազատ լինի, ինչպէս Գեօրգի Գաւորիսի ժա-մանակ, խնդրում է ձեռք բարձրութիւնից ըն-դունել ամենապատասխան և զգացված ող-ջոյն»:

Այդ հեռագրին արձուցիքի միջոցաւ պա-տասխանել է. «Ալբանական համաժողովի նա-խագահին. նորին մեծութիւն թագաւորն ինձ յանձնարարեց չնորակալութիւն յայտնել ձեզ և բոլոր ժողովակիցներին ձեր ողջոյնի համար, որ բարեհաճութեամբ ընդունվեց նորին մե-ծութեան կողմից»:

Այդ հեռագրի մեծ ոգեւորութիւն պատ-ճառեց ալաւանցի հայրենասէրներին, ուստի նրանք որոշեցին դիմել իտալական կառավա-րութեանը և խնդրել, որպէս զի նա միջնորդէ Թուրքիայի առաջ պարտված և բանտարկված ալաւանցիներին ազատելու համար: Այդ որո-շումն իրագործելու է կենտրոնական մարմինը, որի ընտելավարն է Նէապոլը:

Բայց դրանց համաժողովը բազմաթիւ քա-ղաքական նամակներ ու հեռագիրներ է ստա-ցել զանազան նշանաւոր մարդկանցից, ընկե-րութիւններից ու հիմնարկութիւններից: Ընդհանրապէս համաժողովի նիստերը չոր-ծել էին մեծ հետաքրքրութիւն: Պատմական նշանաւոր «Տարսիս» դպիշը, որտեղ գումար-վել էր համաժողովը, միշտ չրջապատված էր խուռն բազմութեամբ: Առանձին ուղարկու-թեան արժանացաւ նախագահ Տօրելլի ճառը, որ այդպէս ընդորոշեց ալաւանցիներին. «Ալաւ-նացին, առում է նա, հաւատարիմ է, անկեղծ

և անձնազոհ... նրա ընտանրութիւնը կրակոտ է... Մեր ազգը զինուորների ու բանաստեղծ-ների ազգ է. մենք կարող ենք կուսել միայն զէնքով ու քանաստեղծութեամբ... Արդէն 400 տարի է, որ ալաւում ենք իտալիայում, բայց չենք կարողանում մոռանալ մեր փոքրիկ, թանկագին հայրենիքը, որովհետեւ հայրենիքը սիրում են ոչ թէ մեծութեան համար, այլ նրա համար, որ նա հայրենիք է... Հաւաքված բազմու-թիւնը բուռն ծափահարութիւններով է ընդու-նում այդ ճառը և բացառականը:

—Կենցեք Իտալիան մեր նոր հայրենիքը: Կեցցէ ազատ Ալբանիան...
Համաժողովը ի միջի այլոց որոշել է հրա-տարակել Նէապոլում սեփական լրագիր՝ Քրոնի-ստիկն, իտալերէն և ալաւանկէն լեզուներով:
Դժուար է, ի հարկէ, մեծ յոյսեր դնել այդ որոշումների վրա, դժուար է շուտափայտ հե-տեանքներ սպասել այդ համաժողովից, բայց և այնպէս ուշադրաւ է կատարված իրողու-թիւնը. հետաքրքրաշարժ է, որ ազատութեան տենչը, ազգային գաղափարը այդպէս արձա-գանք է գտնում նոյն իսկ լեռնական ալաւան-ցիների մէջ:

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Կ. Պոլսից հեռագրում են «Ե. ԲՅՃ.» լրագ-րին. «Եւրոպական գաղանի աստիճանութիւ-նը համոզեց սուլթանին, թէ զաւազրութիւն է կազմված գահընկէց անելու նրան և նրա փո-խարէն գահ բարձրացնելու պրինց Բէշիկը: Ներկայումս են, թէ այն բոլոր զօկութիւնները, որոնցով աշխատում էին ապագայանել սուլթանին զաւազրութեան գայութիւնը, կեղծ-ված են: Բայց և այնպէս Արդիւ-Համիդ, որ ի ընէ չափազանց կոտորած է, իսկ այժմ ա-ւելի ևս կապածու է դարձել Սերիպում վեր-ջին ժամանակ տեղի ունեցած արքայապա-նութեան պատճառով, հաւասաց գաղանի ու-տիկանութեան զեկուցմանը և հրամայեց ձեռ-բակել և աքորել մի ամբողջ շարք այնպի-սի անձներ, որոնք հասարակական և մինչև անգամ պաշտօնական բարձր դիրք ունեն: Զերբալալութիւններն և աքսորվածները կատար են ածվում աստիճանաւոր և գաղանի: Մահ-մեղակա աստիճանաւորների շրջանում մեծ իրարանցում է արեւում այժմ, որովհետեւ աք-սորի զաւազարտվածների ցուցակը յայտնի չէ նոյն իսկ մեծ վեզիրին: Բ. Դոման մէջ և դիպ-լոմատիկան շրջաններում գարնանը են Մէ-մէ-Ալի փաշայի աքսորման վրա դէպի Անգլո-րա, որովհետեւ նա համարվում էր սուլթա-նին ամենահաւատարիմ անձնաւորութիւններից մէկը:

—Սերբիական հետեակ Ծորող գունդը, որ զլիաւոր գործող էր Բեզրաբի գումարում և որի չէֆ լինելուց հրաժարվեց զաւանակա-ն թագաւոր, այժմ պէտք է անուանվի «Պեօար I Թագաւորի գունդ»:

—«Berliner Tageblatt» լրագրին հեռագրում են Լոնդոնից, թէ անգլիական կառավարութիւ-նը, ըստ երեւոյթին, զղջացել է, որ յետ է կան-չել Բեզրաբից իր զենպանին և այժմ դժուար դրութեան մէջ է գտնվում այն տնիթով, թէ ինչպէս պէտք է նորից դիւանագիտական յա-րաբերութիւններ սկսել Սերբիայի հետ: Անգլ-լիական զիւլաւորախայ շուտ կարգադրու-թիւնը խղիւղ յարաբերութիւնները Սերբիայի հետ, առաջ է եկել այն տեղեկութիւնից, թէ Պեօար Թագաւորը խառն է եղել Օրբելայի հե-րի դէմ սարքված զաւազրութեան գործում:

—«Рус. Вѣд.» լրագրի Բերլինի թղթակիցը հաղորդում է, որ երբ պատրաստվում էին Համաւորում օրհնել Վիլհելմ II կայսրի պապ Վիլհելմ I-ի արձանը, կայսրը խնդրեց, որ ար-ձանի տակ հետեակ մակագրութիւնը լինի. «Վիլհելմ I Մեծին»: Համաւորի անտար կրա-րականապէս մերժեց այդ առաջարկութիւնը, յայտնելով, թէ իր համոզմունքով, որ բաժա-նում են հեղինակութիւնը պատմաբաններն էլ, Վիլհելմ I երկար կայսր է ժողովրդի յիշողու-թեան մէջ և ապագայ սերունդներին չորհա-կալութեան արժանի է, բայց «մեծ» նա այնու ամենայնիւ չէր: Չը նայելով այդ մերժման, կայսրը եկաւ արձանի բացման ժամանակ և երեւոյթան քաղաքային տան մէջ ճառ արտա-սանց, որի մէջ ցանկութիւն էր յայտնում ապրել համաձայնութեան մէջ ազգի հետ և յենվել նրա լաւագոյն և անկախ ոյժերի վրա:

—Արտասահմանաւոր լրագիրներում տպված է հետեակ հաղորդագրութիւն Պետերբուր-գից: «Բէյլեյերի գործակալութիւնը նորերս մի ուսու տեղեկութիւն տարածեց, որ իբր թէ Ռուսաստանի և Միացեալ-Նահանգների ինչու տեղի ունէին բանակցութիւններն այն մասին, որ Միացեալ-Նահանգների նախագահը զիմա-ւորութիւն էր յայտնել յանձնել Ռուսաց կա-ռավարութեանը ամէրիկական հրէաների խնդ-րաւորութիւնը: Գիշերելով տեղի ունեցած զէպերի առթիւ: Միացեալ-Նահանգների կառավարութիւնը այդ առթիւով ոչ մի յայտարարութիւն չէ արել: Բայց եթէ նա մինչև անգամ վստա-հանար այդ անկող, Ռուսաստանը ի հարկէ կը կարողանար իր ներքին գործերին մի այդպիսի միջամտութիւնը համապատասխան կերպով պատասխանել:

